



ՄԵԼՔՈՆՅԱՆ ԷԴ. Լ.

**ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Երևան, «ԿՈԼԼԱԺ» հրատ., 2017, 188 էջ:

**ԵԶՐՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ
ՃՇՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ**

Հայության կյանքի առանձնահատկությունները նկատի առնելով, թվում է, կարիք չկա ընդգծելու այն, որ բնաշխարհից հայերի օտարումը մշտապես ուղեկցել է նրանց՝ դարերի հետնախորքից:

Արտաքին աշխարհին այս կերպ հարաբերվելու իրողությունը հուշարկում է այս երևույթին հետևող երկրորդ անառարկելի փաստը՝ այդ օտարումը եղել է հարկադրական բնույթի, ըստ մեծի մասին՝ արտաքին պայմանների թելադրանքով, մասամբ նաև իբրև սեփական վարքագծի կամ կամավոր գործողության արդյունք: Եվ այս՝ երևույթի ծավալների ու ժամանակի վիթխարի չափերի միացյալ արդյունքում նկատվում է հայրենիքից մարդկանց արտահոսքի ձևերի, քաղաքական, տնտեսական, իրավական ու բարոյահոգեբանական պատճառահետևանքային կապերի անխուսափելի բազմազանություն: Երևույթի այս բազմադիմի նկարագրին պետք է ավելացնել դրա մեկ այլ բաղադրիչը՝ դրսևորումը լեզվամտածողության մեջ, գաղթերի ու գաղթականության պատճառների, տեսակի, կերպի, ի վերջո դրանց հասկացության և եզրութային առանձնացման ու բնութագրի խնդիրը: Մանավանդ այն դեպքում, երբ գործ ունենք նշված երևույթով լեզվ-լեզուն հայոց պատմության ու դրան համարժեք չափով՝ այն բնութագրող բառերի, բառակապակցությունների, եզրի ոչ հավակնոտ կամ հատկապես հավակնություն ունեցող մեծ բազմաթիվ օրինակների հետ: Այսպիսի զանգվածում միօրինակություն ստեղծելու, գաղթերի ու գաղթականության իրողությունների մեջ տարրորոշում մտցնելու և ի վերջո, գիտական ճանաչողության վրա հենվող եզրութային հատուկ համակարգ մշակելու և շրջանառության մեջ ներդնելու հետամուտ՝ շատ հաջողված փորձ պետք է համարել Էդ. Մելքոնյանի սույն աշխատությունը: Նշված միօրինակության պակասը, ի դեպ, իրեն շարունակ զգացնել է տալիս նաև մեր

Մելքոնյան Էդ.Լ., Հայ գաղթականություն. տերմինների պատմությունից

պատմագիտության տարբեր ճյուղերում, որտեղ ևս քիչ չեն հանդիպում եզրերի տարբերակները: Հեղինակը հիմնահարցին մոտենում է որոշակի և համակարգային անցումներով՝ դրանց հիմքում դնելով բնաշխարհից հայության արտահոսքը բնութագրող եզրերի ժամանակագրական շրջանառությունը: Արդ, սկսենք **գաղթ** և **գաղթական** եզրերի իմաստավորումից, որով և սկսում է հեղինակը՝ սկզբի և շարունակության մեջ դնելով իր հետազոտության նպատակն ու տրամաբանությունը, այսինքն, իր հստակ ձևակերպմամբ՝ «հայ գաղթականության ուսումնասիրության համար անհրաժեշտ հատուկ լեզվի բառապաշարի ձևավորումը» (էջ 17): Էդ. Մելքոնյանը **գաղթ, գաղութ, գաղթական, գաղթականություն** բառերի (հասկացությունների) գործածության սահմանագիծ է համարում մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակաշրջանը և դրանց հոմանիշներ դիտում **migration, migrant, миграция, мигрант**, մասամբ նաև **colony, colonist, colonial** եզրերը: Նշված համադրումն ինքնին արդյունավետ է հայ պատմագիտությունը եզրութաբանական ընդարձակ կարողություններով օժտելու, այլև արդի գիտական մտածողությանը (հատկապես թարգմանական գրականության՝ օտար լեզուներից հայերենի և դրան հակառակ ընթացքով) համընթաց առաջանալու իմաստով: Այնուհետև, գրքում խնդիրը տեսականորեն հիմնավորվում է սեմանտիկյան իմաստաբանության՝ հայերենի և օտար լեզուների նրբերանգների համապատասխանության տեսակետից: Պատմական իրականության և իրողությունների լեզվական նույն անդրադարձի հաշվառմամբ հեղինակը նոր երանգներ (նրբություններ) է հայտաբերում **տարագիր, գաղթականներ, տարագրյալ, վտարանդի** համադրություններում՝ այստեղ և առհասարակ առաջնորդվելով իմաստային տեղաշարժի որոշակի և պարագայական հանգամանքներով, այն դեպքում, երբ իրողություններին վերաբերող ժամանակակից շարադրանքներում (մամուլ, գրականություն և այլն) կացության փոփոխությունը կարող էր պայմանավորել մեկ եզրի փոխարինվելը (կամ անցումը) մյուսով (**տարագիր-գաղթական, գաղթական-վտարանդի, գաղթական-փախստական** զույգերը): Այստեղ նկատենք, քիչ անց դրան վերստին վերադառնալու պայմանով, որ նույն կերպ հեղինակն իր կարծիքն է հայտնում անգլերեն և ռուսերեն այլ եզրերի, դրանց հայերեն հոմանիշների բովանդակային համապատասխանության վերաբերյալ (**refugee-беженец, գաղթական-փախստական և այլն**): Ուշագրավ է **refugee-գաղթական** զույգի, առավել ևս գաղթական-փախստական զույգի հեղինակային մեկնաբանությունը, երբ բարեսիրական որոշ միջազգային կազմակերպություններ վերապրած հայերին կոչեցին

refugee (փախստական) 1920-ական թթ. ընդունված համապատասխան կարգավիճակով: Հեղինակը նկատում է, որ ռուսներն այդ եզրը թարգմանեցին ճշգրիտ, բայց հայերենում այդ զույգը **փախստականի** փոխարեն դարձյալ թարգմանվեց **գաղթական**, որի համարժեքը ռուսերեն **эмигрант**-ն է, անգլերենում՝ **emigrant**:

Հավանաբար այստեղ գործ ունենք հեղինակային մի վիճելի դիտարկման հետ, երբ ճշգրիտ թարգմանության կամ համարժեքի՝ նրա հասկանալի մտահոգությունը չի ամրապնդվում այն պարզ պատճառով, որ հայերեն լեզվամտածողությունը այդպիսի ճշգրտություն ենթադրում է ոչ թե բառային պատճենումով, այլ բուն իմաստով: Այստեղ կարծում եմ, որ հեղինակային վերապահումը, այսուհանդերձ, մեղմում է վերոհիշյալ դիտարկումը, երբ նա գրում է, որ հայերը չընդունեցին **refugee-փախստական** թարգմանությունը, սակայն գործածեցին **գաղթական** եզրը, որն արդեն արմատավորվել էր նրանց գիտակցության մեջ (էջ 25): Մյուս կողմից, հեղինակը կարծում է, որ **գաղթական** բառի «նման ազատ ըմբռնումը և գործածությունը... փախստականների ու տարագիրների պարագայում» հաշվի չի առնում այդ բառի (գաղթականի) «իմաստային առանձնահատկությունները» (էջ 26): Կարծում եմ, որ հայերեն **գաղթական** բառը լիովին արտացոլում էր **փախստական**-ի նրբերանգը և մասնագիտական կիրառության դեպքում այն կարող էր ընկալվել առհասարակ գաղթականի իմաստային ծավալի մեջ:

Էդ. Մելքոնյանը հետաքրքիր ծալքեր է հայտաբերում բառ-հասկացությունների նկատմամբ հանրության վերաբերմունքի փոփոխականության մեջ: Այս առումով ուշագրավ իմաստաբանական յուրահատկություններ ունեցան նույն **գաղթական** բառի տարբեր ընկալումները տեղաբնակների կողմից (քամահրանքի տարրեր) և իրենց՝ գաղթականների շրջանում (պատվախնդրական դիմակայում՝ ընդդեմ այդ քամահրանքի), որ հեղինակը կարևորում է հենց հասարակական հոգեբանության հակոտնյա ընկալումների իրողությամբ: Դրանց թվին պետք է դասել **թուրքահայ-տաճկահայ, Տաճկահայաստան-Թուրքահայաստան** բառերի փոխարինումը **արևմտահայ և Արևմտահայաստան**, **ինչպես և ռուսահայ և Ռուսահայաստան** անվանումների փոխարինումը **արևելահայ-ով և Արևելյան Հայաստան-ով**՝ իբրև պատմական նոր պայմանների արդյունք, որոնք գործածության իրավունք ստացան տակավին 1920–1930-ական թթ.:

Ներգաղթ և հայրենադարձություն զույգի քննարկման դեպքում ևս հեղինակը հետևողականորեն կիրառում է եզրերի դիսկուրսիվ ընկալման, այ-

Մելքոնյան Էդ.Լ., Հայ գաղթականություն. տերմինների պատմությունից

նույնիսկ ամրագրման ու գործածության ճանաչողական մեթոդը: Վերջինս նպաստում է հասկանալու, իր իսկ խոսքերով, «**ներգաղթ** չեզոք տերմինի» նախընտրելիությունը 1920–1930-ական թթ. հայ վտարանդիների դեպքում՝ **հայրենադարձություն** եզրի նկատմամբ, բնականաբար, արդեն առ ի չգոյ է կամ ամբողջովին պատրանքի վերածված Արևմտյան Հայաստան կոչվող հայրենիքի: Այդ ներգաղթը միանգամայն կիրառելի դարձավ այն բազմաթիվ քաղաքացիների համար, որոնք Երկրորդ աշխարհամարտի ընթացքում, որպես տեղահանված անձինք, պետք է հայրենիք վերադառնային: Կարծում եմ, սակայն, որ հասարակական գիտակցության մեջ **репатриант** եզրի «միանշանակ բացասական իմաստ ստանալը» (էջ 82) հազիվ թե կարելի է համադրել, դարձյալ բացասական իմաստով, **ախպար** բառին. հայ իրականության մեջ վերջինիս գործածությունը, ի տարբերություն **репатриант**-ի, չունի և ոչ մի քաղաքական տրամադրվածություն, այլ արտահայտում էր նորեկների հանդեպ տեղաբնակների ընդամենը կենցաղային անբավականությունը հումորով դրսևորելու երանգներ:

Աշխատության նախավերջին՝ երրորդ գլխում («Հայ գաղթականությունը, որպես հանրություն») քննարկվում են այն եզրերը, որոնք վերաբերում են արդեն գաղթական հանրություններին՝ դրանց ինքնանվանումներին և ասպնջական երկրի կողմից տրված անվանումներին: Հեղինակը հիմնահարցը քննում է, այսպիսով, իր ամբողջականության, տվյալ դեպքում տրամաբանական զարգացումների և ընթացքի մեջ՝ սկսած միջնադարից, երբ հայերն առանձին կրոնական համայնք (հայադավանների հանրություն) կազմեցին Բյուզանդական կայսրությունում, մինչև կրոնադավանական հանրության կարգավիճակը Օսմանյան կայսրությունում, Սիրիայում, Լիբանանում և այլուր՝ ընդհուպ մինչև մեր ժամանակները: Էդ. Մելքոնյանն այստեղ ևս հավատարիմ է մնում շարադրանքի իր տրամաբանությանը՝ թուղցիկ պատմական ակնարկների հենքի վրա բացատրելով գաղթական հայ հանրություններին վերաբերող եզրերը (**վերաբնակիչներ** և **հայ հասարակություն**՝ Ռուսական կայսրությունում) և հիմնավորելով ԽՍՀՄ-ում առանձին հանրություն նշանակող ամեն մի եզրի ավելորդությունը, ուրեմն և չքացումը գաղափարախոսական պարտադրանքով, անդրադառնալով 1920-ականի կեսից **համայնք-община** եզրի վերագործածության փաստին՝ բովանդակային որոշակի ձևախեղմամբ և այլն:

Ցույց տալով հայ գաղութների պատմության ուսումնասիրությունը ամլացնող գաղափարախոսական հիմքերը և ապա 1950-ականից տարերայնորեն սկսված նոր պատմագիտական գործերի հայտնությունը, հեղինակը նկա-

տում է համապատասխան եզրերի պահանջարկը այդ բնագավառի հետագա աշխատություններում, երբ ավանդական եզրերը համալրվում են նոր իրողությունների վրա ձևված՝ **սփյուռքահայ, գաղթօջախ, գաղթավայր, գաղթաշխարհ** բառերով: Այս բազմազանությունների մեջ նա իրավացիորեն նկատում է տարերայնության գործոնը, որը շարունակվում է առ այսօր՝ կրելով նաև տարբեր հեղինակների անհատականության կնիքը: Գիտական անվանումների այսպիսի բազմաթիվ համադրումները, զուգահեռ գործածությունները, նույն անվանումների իմաստային նրբերանգների կամայական հերթագայումները, որ փաստականորեն հագեցած եզրակացություններով հիմնավորում է Էդ. Մելքոնյանը, մեծապես խանգարում են եզրերի գիտական ամրագրմանը, դրանց միօրինակության և միասնականացման պահանջին: Այդ իր հերթին, սպառնում է հայ գաղութների պատմության ճյուղի հետագա զարգացմանը՝ ստեղծելով շփոթ և խճճվածություն գիտական հաղորդակցության ասպարեզում: Հայերենի ճոխ ու ճկուն բառապաշարը (հատկապես զույգ գրական լեզուների առկայության պայմաններում), բառաստեղծման ընդարձակ կարողությունները և հոմանիշների մեծ բազմազանությունը, որ, թվում է կարճ ժամանակում պետք է նպաստեր հասկացության ամրակայմանը, իբրև եզրի, հիմնավոր տազնապ է պատճառում հեղինակին, երբ նկատում է, որ եզրութաշինության ասպարեզում մեզանում զարմանալիորեն վերարտադրվող ճիգերը «հավելյալ բարդություններ են ստեղծում գիտական խոսք, մանավանդ տերմիններ մշակելու դեպքում» (էջ 129): Այս է, կարծում եմ, հեղինակի ամենակարևոր մտադրությամբ, որ նրան՝ սփյուռքագիտության ճանաչված մասնագետին և գիտնականին, մղել է ձեռք զարկելու խնդրո առարկա հիմնահարցի մշակմանը և հաղորդակցվելու գիտական հասարակայնության՝ և հայրենական, և արտերկրի հայագետների ընդարձակ լսարանի հետ: Հատկապես այս վերջին հանգամանքով և ի նպաստ եզրերի կանոնակարգված շրջանառության, հեղինակը զուսպ, բայց և հստակ առարկումներ է անում **գաղութ** հասկացության որոշակի անվանումների (**գաղթավայր՝ Ա. Աբրահամյան, գաղութ-համայնք** անցումը՝ ըստ Գ. Խրլոպյանի և Հ. Մելիքսեթյանի, **գաղութ, գաղթավայր, գաղթօջախ, համայնք, գաղթաշխարհ** եզրերի համատեղ գործածությունը ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորի առաջին հատորում (Ե., 2003) և այլն: Ինքը՝ հեղինակը, առաջարկում է համայնք հասկացության իր սահմանումը, կարելի է կարծել՝ հիմնավոր փաստարկներով:

Մելքոնյան Էդ.Լ., Հայ գաղթականություն. տերմինների պատմությունից

Աշխատության վերջին հատվածում հեղինակը քննարկում է **սփյուռք**, **դիասպորա** եզրերը, դրանց բուն բովանդակությունն ու գործածության մեջ մտնելու ժամանակի հետ կապված հարցերը: Այստեղ ևս հիմնախնդիրը քննարկվում է տարբեր դիտանկյուններից (այլազգի էթնիկական փոքրամասնությունները **սփյուռք** եզրով կոչելու, հայերեն գրականության մեջ ավանդական և արդիական իմաստներով դրանց տարբերակման հարցեր, **դիասպորա-սփյուռք** եզրերի ընդհանրություններ և տարբերություններ, **հին և նոր սփյուռքներ** «արհեստածին խնդրի» առաջացման պատճառների վերհանում և այլն) և մտածված առարկություններով՝ եզրերի կամայական իմաստափոխման և դրանց նշանակության չպատճառաբանված համահարթեցման դեմ:

Մի հետաքրքիր առանձնահատկություն ևս ունի այս աշխատությունը. նկատի առնելով հիմնահարցի իսկապես բազմաձև բնույթը, եզրերի կամ դրանց հավակնությունն ունեցող բառերի ու հասկացությունների փարթամ տարբերակների մեջ առավել հիմնավորն ընտրելու արդի պահանջը և այդ ընտրության հանգույցներում թեր և դեմ տեսակետների անխուսափելիությունը, հեղինակը բնավ չի պարտադրում իր նախասիրությունները, այլ հանդես է բերում լայնախոհ զգուշավորությամբ: Իր առաջարկները նա դիտում է զուտ գիտական շահեկանության տեսանկյունից, իբրև նպաստավոր հենք՝ եզրերի ու հասկացությունների կայացման արդի գործընթացներում:

Կարելի է և անգամ անհրաժեշտ՝ ինչ-ինչ առարկություններ անել հեղինակի այս կամ այն մտադրությին, քննարկման նախասիրած ոճին կամ հիմնավորմանը, բայց կա առավել կարևորը՝ հիմնախնդրի առաջադրումն ու արժարժումը, իբրև վաղուց ի վեր հասունացած մտավոր պահանջմունք և որն այս աշխատությունը դարձնում է հրատապ և սպասված: Իրոք, հայ սփյուռքագիտությունը անխուսափելիորեն առնչվում է առհասարակ սփյուռքագիտության, որպես միջազգային գիտության զարգացման ընթացքին, կրում է դրա ազդեցությունն ու յուրովսանն ազդում այդ ընթացքի վրա, որտեղ և առաջնահերթություն է ստանում քաղաքացիություն ստացած և կայուն եզրութաբանությունը՝ փոխհաղորդակցական կարողությունների ընդլայնման թելադրանքով: Եվ այս տեսակետից էլ, կարծում եմ, Էդ. Մելքոնյանի աշխատությունն ունի հույժ արդիական գիտական նշանակություն՝ հայրենի գիտության հետագա առաջարժման համար:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ